ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2014թվականի N 101

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի բնակիչ՝ Արա Պետրոսյանը դիմել է Բամբակաշատ համայնքի 15 փողոց թիվ 14 տան հասցեում գտնվող 0.12 հա օրինական տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 0.0246 հա հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքներ վերականգնելու խնդրանքով,որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով,որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001 թվականը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով,"Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով "Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհավանական բնակելի տների կարգավիճակի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Չեղյալ համարել 23/10/2014 թվականի համայնքի ղեկավարի թիվ 98 որոշումը:
2. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի 15 փողոց թիվ 14 հասցեում գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ քաղաքացիներ՝ Արա Պետրոսյանի ծնված 23/06/1966 թվականին,Էմմա Պետրոսյանի ծնված 10/01/1970 թվականին,Դավիթ Պետրոսյանի ծնված 19/12/1990 թվականին տան գույքային իրավունքները ճանաչելով նրաց սեփականության իրավունքը 0.12 հա օրինական հողամասին վրա գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ՝ բնակելի տուն՝ 138,32 քմ կառուցված 1989 թվականին ,նկուղ՝ 23,45 քմ կառուցված 1989 թվականին ծածկ՝ 44,15 քմ կառուցված 1990 թվականին,պարիսպ՝ 0,79 քմ կառուցված 1989 թվականին:
3. Տնամերձին կից ավել օգտագործվող 0.0246 հա հողամասը անհատույց հատկացնել սեփականության իրավունքով
4. 2002 թվականին կառուցված 10,88 քմ անասնաշենքը համարել ինքնակամ:
5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ՝ Արա Պետրոսյանի,Էմմա Պետրոսյանի,Դավիթ Պետրոսյանի սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին և 2-րդ կետում նշված հողամասի բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ,տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
7.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՔԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14 թ.Նոյեմբերի 03,

գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2014թվականի N 102

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի բնակիչ՝ Սարգիս Սարգսյանը դիմել է Բամբակաշատ համայնքի 6/2 փողոց թիվ 15տան հասցեում գտնվող 0.12 հա օրինական տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 0.0158 հա հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքներ վերականգնելու խնդրանքով,որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով,որ կառույցը իրականացվել է մինչև 01.06.2001 թվականը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով,"Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով "Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհավանական բնակելի տների կարգավիճակի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի 6/2 փողոց թիվ 15 հասցեում գտնվող ինքնակամ բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ քաղաքացի՝ Սարգիս Սարգսյանի ծնված 10.09.1955 թվականին ,Ալվարդ Խաչատրյանի ծնված 25.10.1953 թվականին,Գառնիկ սարգսյանի ծնված 23.01.1979 թվականին և Էլմիրա սարգսյանի ծնված23.07.1980 թվականին տան գույքային իրավունքները ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.12 հա օրինական հողամասին վրա գտնվող ինքնակամ բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ՝ ինքնակամ բնակելի տուն՝ 130,0 քմ կառուցված 1997 թվականին:
Տնամերձին կից ավել օգտագործվող 0.0158 հա հողամասը անհատույց հատկացնել սեփականության իրավունքով:
Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Սարգիս Սարգսյանի սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին և 2-րդ կետում նշված հողամասի բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ,տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14 թ. նոյեմբերի 03,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2014թվականի N 103

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի` ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 01 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի բնակիչ՝ Վանիկ Մարգարյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 0114-0026/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայքի 20/3 փողոց, թիվ 8 տնամերձ հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում` պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14 թ.Նոյե,բերի 06,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2014թվականի N 104

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱԿՈԲ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի բնակիչ՝ Հակոբ Վոլոդյայի Սաֆարյանը դիմել է Բամբակաշատ համայնքի կենտրոնական փողոց թիվ 60 տան հասցեում գտնվող ժառանգության իրավունքով ձեռք բերված 0.22614 հա օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքներ վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով,որ կառույցը իրականացվել է մինչև 01.02.1985 թվականը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով,"Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Չեղյալ համարել 2014 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 96 որոշումը:
2. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի կենտրոնական փողոց թիվ 60 հասցեում գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ ժառանգության իրավունքով ձեռք բերված քաղաքացի՝ Հակոբ Վոլոդյայի Սաֆարյանի ծնված 04.04.1956 թվականին տան գույքային իրավունքները ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.22614 հա օրինական հողամասին վրա գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ կառուցված նկուղ՝39.1 քմ կառուցված 1954 թվականին ,1 հարկ՝ 188.8 քմ

կառուցված 1954 թվականին, ծածկ` 65,4 քմ կառուցված 1954թվականին, անասնագոմ `46,5 քմ կառուցված 1954 թվականին,ավտոտնակ `39,2 քմ կառուցված 1954 թվականին, օժանդակ` 69,3 քմ կառուցված 1954 թվականին :

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի` Հակոբ Վոլոդյայի Սաֆարյանի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14թ. Նոյեմբերի 10,
գ.Բամբակաշատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2014թվականի N 105

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 01 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի բնակիչ՝ Կարավ Կոստանյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 0100-0004/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 22/1 փողոց, թիվ 6 տնամերձ հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14թ. Նոյեմբերի 11,
գ.Բամբակաշատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2014թվականի N 106

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 80-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքում 2014 թվականի նոյեմբերի 17-ին կայացած գյուղատնտեսական նշանակության  հողամասերի մրցութային կարգով վարձակալության տրամադրման արդյունքները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Արմավիր մարզի Բամբակաշատ գյուղական համայնքում 2014 թվականի նոյեմբերի 17-ի կայացած /ծածկագիր 0522-0004  5.446 հա խաղողի այգի և 0522-0003 0.378 հա այլ հողատեսքի/  համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալությամբ տրամադրման մրցույթի վերաբերյալ թիվ 1.1,2.2 արձանագրությունները:
2.Մրցույթում հաղթող ճանաչված Հրաչ Ոհզունյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր 25 տարի ժամկետով:

3.Սույն որոշումը ուժի մեջ ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14թ.Նոյեմբերի 17,
գ.Բամբակաշատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2014թվականի N 107

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 7-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի մի խումբ բնակիչների դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Բամբակաշատ համայնքում ցածրարժեք հողատեսքերը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքերի՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը սահմանված կարգով հինգ օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3.Սույն որոշմամբ իրականացված հողատեսքերի փոփոխումն սահմանված կարգով արտացոլել յուրաքանչյուր տարվա համար կազմվող համայնքի հողային հաշվեկշռում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2014 թ.Նոյեմբերի 21,
գ.Բամբակաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Բամբակաշատ գյուղական համայնքի
ղեկավարի 2014թվականի Նոյեմբերի 21-ի
թիվ 107 որոշման

ՑՈՒՑԱԿ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆՎԱԾ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԽԱՂՈՂԻ ԵՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ

| Հ/հ | Հողի կոդը | Ազգանուն,անուն | Սեփ. հա | Խաղող | Ծի-րան | Դեղձ | Սա-լոր | Կեռաս | Խըն-ձոր | Տանձ | Ժամանակա-հատվածը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 0224-0004 | Արիստակեսյան Նելլի | 0.24 | 0.24 | | | | | | | 2014թ.գարո |
| 2 | 0224-0002 | Արիստակեսյան Ռուստամ | 0.24 | 0.24 | | | | | | | 2014թ.գարո |
| 3 | 0224-0001 | Արիստակեսյան Ասպրամ | 0.14 | 0.14 | | | | | | | 2014թ.գարո |
| 4 | 0243-0002 | Մնացականյան Արտակ | 0.29 | 0.29 | | | | | | | 2014թ.գարո |
| 5 | 0243-0003 | Մնացականյան Արտակ | 0.29 | 0.29 | | | | | | | 2014թ.գարո |
| 6 | 0226-0005 | Սարգսյան Շմավոն | 0.60 | | | | | 0.60 | | | 2014թ.գարո |
| 7 | 0293-0005 | Սիմոնյան Աշոտ | 0.37 | 0.37 | | | | | | | 2014թ.գարո |
| 8 | 0206-0018 | Մանուկյան Աստղիկ | 0.7 | 0.7 | | | | | | | 2014թ.գարո |
| 9 | 0225-0002 | Վարդանյան Մնացական | 0.48 | 0.48 | | | | | | | 2014թ.գարո |
| 10 | 0102-0001 | Խաչատրյան Մարատ | 0.12 | 0.12 | | | | | | | 2014թ.գարո |
| 11 | 0102-0002 | Խաչատրյան Մարատ | 0.62 | 0.62 | | | | | | | 2014թ.գարո |
| 12 | 0254-0005 | Մանուկյան Դոլվարդ | 0.45 | 0.45 | | | | | | | 2014թ.գարո |
| 13 | 0254-0001 | Աֆրիկյան Վալոդ | 0.60 | | | | | 0.25 | | | 2014թ.աշո |
| 14 | 0293-0004 | Գասպարյան Աղավնի | 0.45 | 0.45 | | | | | | | 2014թ.աշո |
| 15 | 0293-0003 | Գասպարյան Անահիտ | 0.26 | 0.26 | | | | | | | 2014թ.աշո |
| 16 | 0285-0003 | Խաչատրյան Ալեքո | 0.41 | 0.41 | | | | | | | 2014թ.աշո |
| 17 | 0285-0004 | Խաչատրյան Արտակ | 0.21 | 0.21 | | | | | | | 2014թ.աշո |
| 18 | 0243-0001 | Մնացականյան Արտակ | 0.43 | 0.43 | | | | | | | 2014թ.աշո |
| 19 | 0235-0003 | Մնացականյան Արտակ | 0.62 | 0.62 | | | | | | | 2014թ.աշո |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | 0278-0005 | Ենգիբարյան Սարգիս | 0.785 | 0.785 | | | | | | | 2014թ.աշուն |
| 21 | 0283-0002 | Սարիբեկյան Մարտիկ | 0.71 | 0.71 | | | | | | | 2014թ.աշուն |
| 22 | 0283-0001 | Սարիբեկյան Հակոբ | 0.59 | 0.59 | | | | | | | 2014թ.աշուն |
| Ընդամենը | | | 9.605 | 8.405 | | | | 0.85 | | | |

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014թվականի N 108

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 01 որոշումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի բնակիչ՝ Սերոբ Ալեքսանյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 0033-0014/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 7/5 փողոց, թիվ 23 տնամերձ հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2014 թ.Նոյեմբերի 24,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014թվականի N 109

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 01 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի բնակիչ ՝Ազնիվ Մրջեյանին պատկանող ժառանգությամբ ձեռք բերված տնամերձ հողամասին /ծածկագիր 0049-0003/ և տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 13/3 փողոց թիվ 4 բնակելի տան:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14թ.Նոյեմբերի 24,
գ.Բամբակաշատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

03 նոյեմբերի 2014թվականի N 03

## ՆԱԻՐԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ, 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված ցանկի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 1265-Ն որոշումը և հիմք ընդունելով Բամբակաշատի ԲԱ ՓԲԸ-ի տնօրեն Նաիրա Ավետիսյանի 2014 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի «Բամբակաշատի բուժամբուլատորիա»-ի փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Նաիրա Ավետիսյանին 2014 թվականի նոյեմբերի 1-ից տրամադրել 2014 թվականի ամենամյա արձակուրդ՝ 22 աշխատանքային օր /20 օր նվազագույն,2 օր լրացուցիչ/ տևողությամբ:
2. Նաիրա Ավետիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել Աստղիկ Վարանցովի Շիրինյանին:
3. Նաիրա Ավետիսյանին աշխատանքի մեջ համարել 2014 թվականի դեկտեմբերի 2-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14թ.Նոյեմբերի 03,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

03 նոյեմբերի 2014թվականի N 04

## ՆԱԻՐԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ «ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 126-րդ հոդվածով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 29-ի N13 և համայնքի ղեկավարի 2014 թվականի հուլիսի 15-ի N 74 որոշումները

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Նաիրա Ավետիսյանին «Բամբակաշատ բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնից նշանակել «Բամբակաշատ բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնին:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14 թ.Նոյեմբերի 03,
գ.Բամբակաշատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

14 նոյեմբերի 2014թվականի N 05

### ՍՊԱՐՏԱԿ ԵՂԻԿՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով,աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Սպարտակ Եղիկյանի նկատմամբ կիրառել խրախուսանք միանվագ դրամական պարգևատրում 125000 դրամ:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2014 թ. Նոյեմբերի 14,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14 նոյեմբերի 2014թվականի N 06

## ՍՏԵՓԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի «բ» ենթակետով, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Ստեփան Մարտիրոսյանի նկատմամբ կիրառել խրախուսանք միանվագ դրամական պարգևատրում 140000 դրամ:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20 14թ.Նոյեմբերի 14,
գ.Բամբակաշատ